

ԲԱԺԱՆՈՐԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար
սարեկան 12 ջր
վեցումնայ 6 »
Արսասահմանի
համար սարեկան 15
վեցումնայ 8

Ամերիկայի համար
Տարեկան 3 ջր
վեցումնայ 1.50 »

« անուցման տղր ան-
ջին երեսին համար 40 ս.
իսկ վերջին երեսի հա-
մար 20 սանրիսի է. երեքին
անցի անգամներու համար
20 ս. գեղջ կրչայ »

Վառանջի համար ձեռքի 10 սանրիս

ՇԱՐՋՈՒՄ

Նախկին զրաւ զրկիչ
հոլրագրութեան հաս-
ցիին

Редакция на вѣстникъ
«Шаржумъ»
Варна
Redaction du journal
«Charjoum»
Varna
(Bulgarie)

Արսասահմանի համար
ձեռքի
(20 ՍԱՆՐԻՍ)

Պուշկարիոյ համար
ձեռքի
= 15 ՍԱՆՐԻՍ =

Գրութիւնք եւ չեւ տրուիր

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹԻ ՉՈՐԵՔՆԱԲԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՍՐԵՐԸ

« ՇԱՐՋՈՒՄ »-Ի ԲԱԺԱՆՈՐԿԱԳՐՈՒՄԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԷՏԻ Է ԿԱՆԱԿՎԱԾՈՒՄ

ՅՈՅԱԸ

Վերջապա էր, ամբան մի գաղջ
իրիկուն,
Հորիզոնէն հորիզ ծագած կը վա-
ռէր.
նստած էի սարին վերայ, ուր ժայ-
ներ
Կ'երազէին ինձ պէս տրտում ու
խոհուն:

Ե լըսեցի թաւուտներուն մէջ
տըկար
Ոսնածայնը աղւորի մը լուսաթոյր
Որ դուրս ելաւ. վարդի նրման հեշ-
տաբոյր
Իր շուրթերուն Յոյսին անհուն
չեշտը կար:

Կին մը չէր ան, այլ ոգի մը
լուսածին
Որ թըսած էր վերջապայէն վեհա-
գոյն,
ձանձնագեղ առաքեալի մը ման-
գոյն,
Կըրակ տալու հոգւոյս մարած հը-
նցին:

Հագեհրմայ իր ժրպիտէն խելա-
յեղ.
«Յուսահատ մ'եմ գոչեցի. ես սը-
գասոր,
Նընորհ ըրէ՛, ինձի ալ տուր, ո՛վ
աղւոր,
Եւ թեանրդ մէջը վառուող յոյսէն
վեհ»:

Յուրաց դէմքին վերջապայը բո-
ցավաւ,
Ու ժպտաղէմ մտենալով յամբա-
քայլ:
Նուշանք պէս ճերմակ ծոցէն սրը-
բափայլ
Արիւններկ թուր մը հանեց, ը-
սաւ. առ:

Համբոյր տըւի խանդով թուրին
ու մինչդեռ
Կուզէի տալ համբոյր մըն ալ իրեն
ես,
Տեսա՛ւ, դեռ նոր լողանք ըրած
կոյսի պէս
Շիկնող լուսին, մէջէն անի կը ժրպ-
տէր:

ՎԷՏԱ

ԲԻՒՍԷԼԻ ՀԱՄԱՇՈՂՈՎԸ

Բրիւսէլի հայասէրներ ճա-
մատողը արդէն վերջացու-
ժողովը սկզբունքով ընդունել է
պահպանել Թուրքիոյի ամբողջ-
ջութիւնը և ջանալ Բերլինի 61րդ
յոգւածը գործադրել տալ:

Աւրեմ կրկին Բերլինի 61րդ
յոգւածի գործադրումն է որ հա-
յերի վիճակը պիտի կարողանայ
բարւոքել: Բայց խնդիրը այդ
յոգւածը գործադրելու մէջ է.
25 տարի է որ այդ յոգւածը գո-
յութիւն ունի. այս անգործ ժա-
մանակամիջոցում, ոչ միայն նա
բոլորովին չի գործադրվել: այլ
ընդհակառակը Հայաստանում այդ
յոգւածին տրամագծապէս հակա-
ռակ գործեր են կատարվել:

Ժողովի անդամները պիտի ջա-
նան գործադրել տալ. այսինքն
զանազան օրինաւոր միջոցներով
պէտք է ազդեն դիպլոմատներին
վրա և ստիպեն որ այդ յոգւածը
գործադրվի:

Հայերս հիմա անփորձ չենք:
Գիտենք որ դիւրամատները բա-
րոյական ստիպումներ ճնշման
տակ չեն ընկճվում: Նրանց ընկ-
ճում է կամ շահը, կամ թնդա-
նութը: Իսկ հայասէրները այդ
միջոցներից բոլորովին զուրկ են:
Ճնորհակալ ենք եւրոպացի հա-
յասէրներին. անուժ են այն ինչ
որ կարողանում են: Բայց միթէ
դրանից աւելին չէին կարող ա-
նել:—կարող էին և կարող են.
սակայն ինչպէս երեսում է դեռ
հայերս չենք կարողացել այդ-
չափ սիրելի դառնալ եւրոպայի
հայասէրներին:

Ինչով կարող ենք սիրտ ունե-
ցող եւրոպացիներին սիրելի
դառնալ: Ինչ պէտք է անենք
որ եւրոպացի մեզ բացի խօսքի
օգնութիւնից. ուրիշ, աւելի
դրական օգնութիւն տայ: Ինչով
կարող ենք Գարիբալդիների,
բայրօնների ժառանգորդների
սիրաւը դէպի մեզ գրաւել:

Մեր անձնագոհութեան, արի-
ութեան, քաջութեան և ազատու-

թեան համար անվերջ, յարատե-
կաւր մղելու ընդունակութեան
չօշափելի. անուրախի և աշք
ծակող փաստերով:

Եւրոպան մեր որբերին օգնեց,
եւրոպան մեր գաղթականներին
օգնեց, եւրոպան մեր թշուառու-
թեան վրա օղբաց, թէեւ այդ
օղբը երբեմն կեղծ էր. բայց եւ-
րոպացին դեռ մեզ չընկերացաւ
կուրի գաշտում, ինչպէս արաւ այդ
Յունաստանի, Իտալիայի և Տրանս-
վալի մէջ:

Եւրոպացու այդ ընկերացումը
պէտք է ձեռք բերել: Պէտք է
ճիշդ թափել որ այսուհետեւ եւ-
րոպացին համաժողովներ կազմի
մեզ կուրի ընկեր և միջոցներ
հայրենիքի համար:

ՎԱՐԴՈ

ՀԱՄԵՐԱԺՆՈՒԹԻՒՆԸ

Ամենատոյգ ազգիւրէ կիմա-
նանք որ Հ. Յ. Դաշնակցութեան
Արեւմտեան պիւրօն ղիմած է
Հնչակեան Միացեալ կեդրո-
նին միասին դիմում ընելու Պրիւք
սէլի մէջ կայացած հայասէրնե-
րու համաժողովին. և Հնչակեան
կեդրոնը սկզբունքով ընդունած
է այդ քայլը միասին ընել:

Կուրախանանք, և շատ, որով-
հետեւ ատով մեր յեղափոխական
կուսակցութիւններու վարիչ մար-
մինները երկրորդ անգամ (առա-
ջինը թուրքերու ժողովին) շո-
շափելի կերպով կը փաստեն թէ
իրենք տրամադիր են կարեւոր
պարագաներու մէջ համերաշխու-
բար գործել:

Մէկ քանի այդ պիտի քայլեր,
և այն թէ օտարը թէ հայ ժողո-
վորը պիտի համոզուի որ հայ
յեղափոխական մարմինները ոչ
միայն իրարու ինչնամիններ չեն,
այլ և անհրաժեշտ պարագանե-
րու մէջ կրնան կազմակերպական
տարբերութիւնները ոտքի տակ
առնուլ և հայրենիքի շահերը մի-
սին պաշտպանել: Եւսօր համե-
րաշխութիւնը տեղի կուենայ

այդ տեսակ պարագաներու մէջ,
վաղն ալ ան տեղի պիտի ունենա
կուրի գաշտին մէջ, մեր թշնա-
միին ղիմացը. միութիւնը, ու-
րուն քոյի տակ այնքան անպէտ
ու ֆրասակար անձեր դաւեր կը
օտարեն մեր յեղափոխական գոր-
ծին դէմ. ինքնին տեղի պիտի
ունենայ:

Այդ համերաշխ քայլերու մէջ
է որ կուսակցականները իրար
մօտիկէն պիտի ճանչնան, պիտի
վարժուին իրարու մօտիկ ընել,
իրարու հետ խորհրդակցելու յոյն-
պէս այդ համերաշխ քայլերին
է որ պիտի զօպէ սանձարձակ,
կոյր և համբակ կուսակցականնե-
րը, որոնց համար զրգելի մո-
լութիւն մը դարձած է ալ ու
ձախ հարւածել տարբեր կուսակ-
ցութիւն մը:

Մեզի համար աւելի ուրախալի
է որ այս անգամ ալ Դաշնակցու-
թիւնը կըլլայ համերաշխաբար
գործելու առաջին քայլը ընողը.
ուրախալի է, որովհետեւ ատով կա
պացուցվի որ Դաշնակցութիւնը
երբէք հակառակ չէ տարբեր կու-
սակցութեան մը հետ համերաշ-
խաբար գործելու այն պարա-
գային, երբ համոզուած է թէ
այդ տեղ միասին ըլլալը օգտա-
կար է:

Դաշնակցութեան այդ տեսակ
քայլերը կը ջախջախեն իրեն
վերագրած շարք մը զրպարտու-
թիւններ իր անհամբերատարու-
թեան մասին:

ԿԷՏ

ՀԱՄԱՔԱԿԱՆ ՈՅԺԵՐՈՎ

Հայաստանէն սեւ լուրեր կուգան
կողոպուտ, սպանութիւններ, առե-
ւանգումներ վերսկսած են հոն գարնան
հետ: Թիւրք կտոմարութիւնը ծրա-
գրեր է Սասնոյ քաղաքի ժողովուրդը
գաշտ գաղթեցնել, որ ինք տիրանայ
անոնց անտուկ սարերուն: Արդէն
զօրք ճամբայ հանուած է այս մտքով:
Ճգնաթամային բոպէի մէջ է հայրենի-
քը: Այլ ժամանակ է, որ «սարսափի»
չըջանն դուրս ապրող հայութիւնը ո-

րոչ և վճռական դերք բռնէ դէպի իր գծադր մայր-երկիրը :

Ինչ կարող է ընել զբոս հայու-թիւնը : Օ՛ր շատ բաներ : Երիտա-սարդները կարող են հրացանաձգա-կան ընկերութիւններ հաստատել և մարտական խմբեր դրկել Հայրենիք հրապարակ և վայել գործ երիտա-սարդական արկածախնդիր և ապե-տական հոգու համար : Օրիորդները և հարսերը կարող են «գիշերները քուն չըլլալով դրօշակներ գործել» , ասեղ շարժել «հայկական կարմիր թաշի նպատակներու համար» : «ճա-խել իրենց հազի թանգ շորերը» Հայ-րենիքի ազատութեան գործի սիրոյն, վերջապէս կամք և դէպի լաւ գործ մը անձնուրաց սէյր ունեցող հայութիւնը կարող է ընել շատ շատ բաներ :

Ո՛ր կէ դրամ : Սպասենք , որ հայ կրեստ մը միլիոններ նուիրէ : Այն ատեն պէտք էր անվերջ սպասել , մինչդեռ մենք սպասելու ժամանակ չունինք , գործելու պէտքը անհրա-ժեշտ է դարձեր : Հայ հարստներէ ոմանք ուկէ հորթի պաշտօն կը կա-տարեն , իսկ անոնք որ տրամադիր էին տալու , կըսեն , թէ հաստք չունին դէպի գործը , ուստի չեն ալ տար : Բայց մեզ ամօթ է մտրացիկ-ներու պէս անոնց ձեռքը նայլ : Դա անտեղի է և անպէտ : Հեղեղը չէ , որ կը ծակէ ապատածը , այլ կաթիլ կա-թիլ չուրը : Ուստի ինքնավստահ և վառ յոյսով թափենք մեր յարատեւ կաթիլները հայրենիքի ինքնապաշտ-պանութեան և ազատութեան գոր-ծին համար , անոնք երթալով հեղեղ

կը դառնան և իրենց մէջ կրնգունին գիտերն ալ :

Այսպէս հաւաքական ոյժերով գոր-ծելու օրինակը տուա մեզ Ամերիկա-յի հայութիւնը իր «երկրի ինքնա-պաշտպանութեան» համար կազմուած յանձնաժողով : Մեզ կը մնայ հետեւիլ այս դեղեցիկ օրինակին : Թող կազ-մուին ամեն տեղ , ուր Հայ կայ , «Հայրենիքի ինքնապաշտպանութեան համար յանձնաժողովներ» , որոց նը-պատակը ըլլայ դրամական օգնութիւն հասցնել Հայաստան : Անոնք թող ի-րենց չուրը հաւաքեն ամբողջ հա-յութիւնը , թող տան ներկայացու-ման , թող կազմակերպեն հանգէսներ , թող գիտեն ամեն միջոցի , ժամանակը թանգ է . պէտք է վերջապէս թմրու-թենէ և ծուլութենէ սթափիլ ու գործել հաւաքական ոյժերով :

Արօզու (Զուլիգեր/իս)
ՄԱՐԶՊԵՏՈՒՆԻ

ՅԲԱՆՍԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՏՕՒՐ

Յրանսայի ժողովուրդը՝ երեկ չէ անջի օր՝ հարիւր տասներեքերորդ անգամ լինելով մտղմրդական խն-դութիւններով և տաներով վերջի շեց Պատարի դղիկին առումը : Յի-րաւի ուղիղ 113 տարի առաջ յուլիս 14ին , Բարիդի ժողովուրդը յեղափո-խած , ահագին բազմութեամբ՝ քրեկ պեա ունեւալով ժողովուրդի մէջէն ընտ-րուած մարդիկ , կը յարձակէր՝ Բա-րիդի մէկ անկիւնը գտնուող դղեակի մը վրայ , որուն Պատարի անուն կու-տային և ուր կը բանտարկուէին քաղաքական և քրէական յանցա-

ւորները : Ժողովուրդը տիրեց դղեա-կին բանտարկեալներուն ազատու-թիւն տուաւ , կրակը տուաւ վստեց չէնքը և յետոյ քարու քանդ ըրաւ կրակէն գերծ մնացած մասերը : Այդ օրէն սկսած Քրանսական ժողովուրդն իր աչքը բացած էր , նա բուռն ան-զուսպ սէր մը կը դրգար ազատութեան համար , ինչ որ պիտի զգար և ըզ-գացնել տար շարունակ տասը տարի և . աւելի ընդարձակ նայուածքով՝ ամբողջ մէկ դար : Յրանսայի այժմ-եան հասարակապետութիւնը , յուլիս 14ի այդ անմոռանալի օրն ընտրած է Ազգ. տօնի համար որովհետեւ ճըշ-մարտապէս այդ օրը Քրանսացիին ՄԱՐԴ-ՍՁԱՏ դարձաւ :

—Յունիս 14ի առտուն Յրանսան և մասնաւորապէս Բարիդ եռագոյն արթնցաւ (Քրանսական դրօշի գոյ-ններն են՝ կապոյտ , ճերմակ և կար-միր) . բուլվարները , փողոցները , տունները , քաղաքական և պետա-կան շէնքերը ու պալատները , խա-նութիւնները , զինուորանոցները , հա-մայտարներ , դպրոցները , կայարան-ները , մեծ պանթոնները գրօշնրու տակ ծածկուած էին : Յրանսական գրօշներու հետ խառն կը գտնուէին նաև ուսականներն ալ , այս տարի խիստ նշմարելի կերպով շատցեր էին իտալական գրօշակներն , չետեւանք Քրանսո-իտալական մերձեցման և Իտալիոյ թագաւորին Ռուսիոյ կայ-սեր ըրած այցելութեան : Դրօշակնե-րէն զատ ամեն կողմ կայմեր կանգ-նած են , մասնաւոր հրապարակնե-րու վրայ որոնք նոյնպէս զարգար-ուած են գրօշներով , ասոնց վրայէն և Բարի ըւտր թեւեր կանցնին , որոնց վրայ հաստատուած են հազարաւոր գոյլգոյն կանթեղներ , հլեքարական

կապի , մոմի եւն : Մէկ խօսքով Բա-րիդ գեղեցիկ և նոր հարսի նման պճուած է հազար ու մէկ արգասիք դերով :

Առաւօտեան ժամը վեցն է . յան-կարծ Գոնգորտի կամուրջի գլխէն թնդանօթները որոտացին , սա պաշ-տօնական զեկուցուեմ է տօնի սկզբը-նաւորութեան . կարծես այդ թնդա-նօթներն իրենց լեզուով կուզեն ըսի՝ Բարիդի՛ք արթնցէ՛ք , այսօր ու-ղիկ հարիւր տաներեք տարի է որ մեր հայրերը Պատարի ափերցին ... Մօն-Վալերիէնի թնդանօթները կը պատասխանեն Գոնգորտին : Քիչ յետոյ կսկսին որոտալ Վերսալի վէճակի և ուրիշ ամբողջութեան թնդա-նօթներն ալ : Ճիշդ կէսօրին ամեն տեղերու թնդանօթները պիտի որո-տան միանուազ . ժամը Յին նորէն սկսելու : —Վէսօրէն առաջ կատար-ուած գլխաւոր բաներն են Բարի-զարնակ Ալլաս-Լօրէնցիներու Սըրա-պուրի արձանին (Գոնգորտի հրա-պարակին վրայ) այցելութեան եր-թալը , էքզի-իօլիթէքնիք զինուորա-կան վարժարանի աշակերտներու (թւով 150) նոյն արձանին այցելու-թեան երթալը , նոյն արձանին այ-ցելութեան գացին նոյնպէս՝ Բարիդի քաղաքապետութիւնը , Ալէնի նա հանգապետութիւնը , Հայրենասէր-ներու միութիւնը , վերջին խումբը յետոյ ժան ալիքի արձանին ալ ա-ցելութիւն տուաւ , Բուրք այս պատ-ուիրակութիւնները խիստ գեղեցիկ պսակներ և փունջեր դրին յիշեալ արձաններու վրայ : Չի մոռանալ յի-շելու որ առաւօտեան 120 հազար Քրանս բաժնուեցաւ Բարիդի աղքատ ներուն :
Կէսօրէն յետոյ պատահած ամենա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԵՐԱԾԻՆ

ՄԱՍ Ա.
ԳԼՈՒԽ Ե.

Երեկոյթի միս առաւօտը . ժամը տասին Մաղիկեանը դուրս եկաւ հիւ-րանոցից և մի քիչ տատանվելով դրան առջևը , որոշեց գնալ հայոց ե-կեղեցին : Օտար քաղաքներում՝ ա-մեն մի հայ , որչափ էլ անտարբեր լինի դէպի եկեղեցին և դէպի մեր աննաչափ երգեցողութիւնը , եկեղե-ցուց չի խաւսափում . որովհետեւ այն տեղ միայն նա կարող է մեծ հայ բազ-մութիւն տեսնել և ուր է ծանօթի հանդիպել :

Մաղիկեանը այդ պատճառներով գրգռած հարց ու փորձելով գտաւ ե-կեղեցին և ներս մտաւ :

Եկեղեցին լի էր խզուն բազմու-թիւնով . փոքրիկ երգիչները իրենց ճշոցով եկեղեցին զնգնզնագնում էին . մի խոշոր մարդ էլ , չը գիտեմ Տաճ-կահայաստանի որ անկիւնից եկած , վիզը ետ գցած , ծնուտը ծոմոնելով զօր էր տալիս իր անհամ ձայնին , ու եր-գում . նրա երգած եղանակը աւելի թրքական մի շարքի էր , քան հայ եկեղեցական երգ :

Մաղիկեանի քիթ ու բերանը ա-ւրվեց . նա պատրաստվում էր դուրս գալ եկեղեցու քաղ . երբ նրա առ-ջեւով դէպի կանանց կողմը անցան երկու օրիորդներ . նրանցից մէկը Հեղինէն էր . Մաղիկեանը չտարեց , և

զարմացած նայեց Հեղինէին . որը խորամանկ ժպտը շրթունքների վը-րա սպիտակ քօղի տակից աչքերը փայտակերպով անցաւ և կանանց կողմում այնպիսի դերք գրաւեց որ միշտ կարելի էր մաղիկեանին տես-նել :

Այդ դերքում տեղաւորվելուց յե-տոյ՝ Հեղինէն մի երկարատեւ ալ-նարկ նետեց մաղիկեանին , կարծես ասելով—եկեղեցուց դուրս չը գնաս . մինչև վերջ սպասիր :

Հեղինէի խորհրդաւոր նայածքը մաղիկեանին մտեց եկեղեցու սալա-յատակին : Նա մտապաւ եկեղեցին , մտապաւ այնտեղ գտնուող ահագին բազմութիւնը , նրա ականջները այլ ևս չէին լսում մանուկների աննե-րգաշնակ ձիւր , տիրացուի կոշտ զօրն-չը : Նա ընկղմվեց իր մաքերի մէջ , որոնք ամբողջովին կեղծանցան Հե-ղինէի վրա :

—Ինձ համար է եկել այս տեղ . այլ ես պարզ է . սիրում է ինձ Հե-ղինէն : Բայց ես սիրում եմ նրան . ահա գլխաւոր խնդիրը : Ես կարող եմ սիրել , և այն սիրով , որը առ-հասարակ պահանջում է սիրող , ան-հունօրէն սերող կինը : Նա ինձ հա-մար եկել է այս տեղ , իր ծնողնե-րին համոզելու մի միջոց , մի հնար է գտել , մի ամբողջ օր անտանելի ճամբարութիւն է յանձն առել և ե-կել է , մի քանի անգամ աւելի ինձ հետ տեսնվելու համար . կնդիրը հետ-ըզհետէ բարդվում է . աւելի լաւ չի՞ լինի որ ես նրան բուրբոբի չսպա-սեմ և և այս տեղից հեռանամ , դուրս գամ եկեղեցուց : Այդ գոյցէ ամենա-լաւ նշանը լինի , որ ես իրմով այն-

քան էլ չեմ հետաքրքրվում :

Բայց չէ՞ որ այդ էլ սուտ կը լի-նի . Հեղինէնով հետաքրքրվում եմ . ահա նա եկաւ թէ չէ , և էլ ալա-մա միայնցի կանգնած տեղում : Ոչ միայն չեմ զզվում անտանելի երգե-ցողութիւնից , այլ այդ ամենը այդ բազմութիւնով միասին , ինձ համար էլ գոյութիւն չունի :

Վերջ պէտք է դնել այս անորոշ կացութեանը . մեղք է աղչիլը :

Մինչ մաղիկեանը այս մտածու-մանի մէջ էր , Հեղինէն հետաքաւ իր կանգնած տեղից . գնաց երկու քա-ւակաւ խոշոր մոմեր գնեց ու անց-նելով մաղիկեանի կողմը , նրա առ-ջեւում գտնվող սիւնի վրա ամրացրած Մարիամ կոյսի պատկերի առջև վա-սեց և մի երկու անգամ երեսը խա-չակնքելով կրկին մի անուշ խաղաղ նայածք գցելով մաղիկեանի վրա , գնաց իր տեղում կանգնեց :

—Մէկն էլ ինձ համար վառեց . մտածեց մաղիկեանը , ուրեմն Հեղի-նէն հաւատացեալ է : Նա ինձ համար աղօթում է...

ժամասացութիւնը աւարտվեց . բազ մութիւնը սկսեց դուրս գալ եկեղե-ցուց . Մաղիկեանը մի քանի վայրկ-եան անշարժ մնաց իր կանգնած տե-ղում , Հեղինէն և իր ընկերուհին եկան :

—Ինչ էք կանգնած մնացել , պա-րոն մաղիկեան , շննջաց Հեղինէն . ինձ էք սպասում :

—Այո , օրիորդ , սպասում եմ , ես էլ չը գիտեմ թէ ի՞նչու եմ սպասում : Սպասելու ոչ մի իրաւունք չունէի :

—Ի՞նչ գնանք . խնդրեմ ծանօթա-ցէք օրիորդի հետ , իմ հորաքրոջ աղ-

ջիկն է . ես նրանց մօտ հիւր եմ : Ես էլ տօները պէտք է այստեղ անց-կացնեմ : Այսօր լսեցի որ դուք երէկ գիշեր լաւ քէֆ էք արել : Բայց այս գիշեր էլ հօրաքրոջ մօտ ընտանե-կան երեկոյթ կայ , անշուշտ կը գաք-հօրաքրոջ աղջիկը հրաւիրում է ձեզ : Ի հարկէ ես էլ եմ հրաւիրում :

—Բայց , օրիորդ , դուք ո՞րտեղից իմացաք թէ ես երեկ գիշեր լաւ քէֆ եմ արել :

—Օհ , պարոն մաղիկեան , դուք դեռ կանանց լաւ չէք ճանաչում , նը-րանք երբ ուզում են մի բան իմա-նալ , անպատճառ իմանում են : Ես դեռ չեմ քան բան գիտեմ . այնպէս չէ՞ Մարիա : Այ , Մարիայի շնորհիւ գի-տեմ , զոյց աւալով հօրաքրոջ աղջկան՝ նրա մի ուղև ընկերուհին , որ Մար-իայէնց տանն է ապրում , նոյն ե-րեկոյթին ներկայ է եղել , նա ձեզ շատ է հաւանել : Այսօր դուք նրա հետ ժամագրութիւն ունէք , այնպէս չէ՞ . երօրոր ճանաչելու էք եղել : Եղեք էլ նրա եղբոր աքսորվալով էք եղել : Իսկ այդ մասին ոչինչ չէք ասել մեզ : Հիմա ես ձեռ անցեալի մասին էլ մի քիչ տեղեկութիւն ու-նեմ : Այ , կարծեմ ձեռ փամաղու-թեան ժամանակն էլ գալիս է . միա-սին գնանք . լաւ չի լինի՞ :

—Ինչու ան օրիորդ , աւելի լաւ կը լինի . չեմ անօթի մօտ մենակ գնալու այնքան էլ դիւրին չէ . աւե-լի լաւ որ ընկերովի կը լինենք :

—Բայց մենք էլ կը գանք ձեզ հետ , մենակ չէք լինի օրիորդի հետ...

—Աւելի լաւ , պատասխանեց Մա-ղիկեանը :

(Շարունակելի)

կարեւոր բանն է Լոնչանի հրապարակին վրայ կատարուած զօրանքները, որոնք մասնակցեցան Բարիկադային պայքարին...

Ով որ յուրիս 14ին մը գրեցրը Բարիկադային պայքարին մասին... Լուսավարութիւնը անկարգութիւն է...

Մե իմ Ս. Գալար թիկ Բարիկ. 46 յուրիս 1902

Վ Ա Ռ Ն Ա Յ Ի ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՄԱՐԱՆՆԵՐԸ

Անցեալ կիրակի անգի ունեցաւ Վառնայի երկսեռ վարժարաններուն ամառային հանդէսը...

Երգեցիկ խումբը, չը նայած իր գոյութեան կարճ միջոցին, շնորհիւ Պ. Ամիրխանեանցի է...

աւանդին, կրցաւ հաճոյ պատճառել հանդիսասեաններուն և հանդէսին առանձին փայլ մը տալ...

Գարոցի շրջանաւարտ աշակերտներէն երկուքը ճառեր կարդացին, մէկը հրատեղի ճառ, միւսը հայ գրականութեան մասին...

Վերջապէս Թ. Սոսիցի շնորհակալութիւններով, Պ. Հայկ Փէշտամաճեան բերանացի տեղեկութիւններ տուաւ ազգային վարժարաններու մասին...

Մէկ խօսքով այդ գարոցական հանդէսին մէջ կար երգ, ազգային վշտի արտայայտութիւն, թերութիւններու ձաղկում, գիտական պայքար, ժողովրդին մատչելի տեղեկութիւններ...

ՆԱՄԱԿ ԽՄԲԱՏՐՈՒԹԵԱՆ

Տե՛ր Խմբագիր,

Թոյլ տուէ՛ք ինձ ուղղել մի թերութեան թիւն, որը գուցէ թերեւս անգիտակցաբար ձանկելեանի մասին գրած էք...

Առանց ու է կողմնակցութեան եւ կը խօսիմ յանուն ճշմարտութեան, Ձեր գրածէն այնպէս կը հասկցուի, թէ ձանկելեան իր գլխին և մասնաւոր նպատակով գրած է իր կենսագրութիւնը և թարգմանել տուած...

Ձանկելեան իմ միջոցով ծանօթացած է մի Գերմանացու հետ, որմէ ինք շնորհակալութեամբ պարտաւորուած է Գերմանացի իբրեւ օտար հետաքրքրուած է ձանկելեանի հետ պատահած արկածներով և խնդրած անոր որ այդ բոլորը նկարագրէ և իրեն զրկէ...

է թարգմանել տալ: Այս բոլորէն զիրեն է ալ հետեցնել, թէ ձանկելեան իր գլխին և մասնաւոր նպատակով չէ գրած և թարգմանել տուած իր կենսագրութիւնը: (*)

Ես այդ գրութիւնը չեմ տեսած, ոչ բնագիրը և ոչ թարգմանութիւնը, այնպէս որ առ այժմ աւելին ըսել չը կարենալով, այսքանով կը բաւականանամ:

Յուսով իմ, որ այս երկտողիս անկիւն մը կը շնորհէք ձեր թերթին մէջ:

Ընդունեցէ՛ք Պ. Խմբագիր յարգանքներս:

ԻՐԱԶԷԿ

ԱԶԳ

Տեղափոխ Ազգ. երկսեռ վարժարանաց փիլակազմացններու և վկայականներու բաշխումը սեղի պիտի ունենայ յառաջիկայ կիրակի օր, 14 յուրիս, Մետրոպոլիտան վարժարանի մէջ, յետ աւարտման Սեկիցեոյ:

Աւստի կը խնդրուի պատ. հասարակութենէն, իրենց ներկայութեամբ պատուել սոյն հանդէսը և քաջալերել երկսեռ ուսանողները:

Հոգարարութիւն Ազգ. երկսեռ վարժարանաց (ԿՆԻՔ) Բուսնով 6 յուրիս

ԱԶԳԱՅԻՆ ԲՐՈՆԻԿ

ԿՈՎԵՆԱՅԻ ԲԱԳՐԱՏ ՎԱՐՄ.

Թաւապալեան, որ ժամանակին յիշափոխական քարոզիչ եղած է, վախճաններ է 50 տարեկան հասակին մէջ, թաւապալեան Կովկասցի առաջին յիշափոխական քարոզիչներէն է, որ մտաւ Տաճկաստան և սկսաւ բուն ժողովրդին մէջ գործել, Հանգուցեալ վերջը կուսակրօն եղաւ իր նպատակին աւելի գիւրտութեամբ ծառայելու համար, բայց չկրցաւ Լաւ քարոզիչ էր և գիտեր իր ազգութեան քարոզչութեամբ ժողովրդեան հովանաւորութիւնը գրաւել գէպի սմբն լաւ գործ:

— Կիլիկիոյ կաթողիկոսական

(*) Մ. Խ. Այո, մենք գիտենք որ ձանկելեան ձեր միջոցով է ծանօթացած վերոյիշեալ բանօրի հետ. գիտենք որ ձեզ աղերսագին նամակ է գրել իր ազգատու թեան մասին: Ամեն մանրամասնութիւն պիտենք, բայց այդ բոլորը միասին չեն կարող ջնջել այն հսկայական սուտերը որ կը կազմեն եւ ձանկելեանի կենսագրականը եւ ատենք ես որ մեծ անպատուութիւն կը բերեն հայ յիշափոխութեան: Կը հաւատանք որ չէք կարգացրէ գրուածքը, և համոզված ենք որ անգիտակցաբար պատճառ էք դարձնել այդպիսի մի շարժառնութեան:

տեղապահ կիրակոս եպիսկոպոս կրկին պարտաւորին նամակ մը գրած է խնդրելով փութացուի կաթողիկոսի ընտրութիւնը, վերջ տրուելու համար թեմական գործերու անկերպարան վիճակին:

— Աւստրիական կառավարութիւնը ուղեւոր վիճենայի Միւլթարեան վանքը միացնել գրացի զինուորական հաստատութեան առաջարկեր է զայն գնել մէկ միլիօն ֆիօրէնի, բայց միաբանութիւնը երեք միլիօն ֆիօրէն (450000 ոսկի) պահանջեր է:

— Կարա Մուրզայի ցաւալի կորուստէն յետոյ ուսահայերը կը զրկուին կարեւոր երաժշտապետ էքմալեանէն, որ հոգեկան հիւանդութեան մը մատնուելով մեռեր է:

էքմալեան երաժշտութեան վերաբերեալ բազմաթիւ ձեռագիր աշխատութիւններ թողուցեր է: — Պատրիարքը գեռ Պատրիարքարան չի իջնար, ուրեմն հրատարականին և պահանջներուն վրայ կը պնդէ:

Պոլսոյ թերթերը պատրիարքարանի պահանջներուն և հրատարականի մասին բան մը չեն գրեր, միայն կըսեն որ տկարութեան պատճառով պատրարքարան չի իջնար:

— Անցեալ երեքշաբթի օր, Իլմիրի մէջ 32 տարու Պոլսեցի հայ մը, Մաքսուտ անունով, անծանօթի մը կողմէ յարձակումի կենթարկուի: Անծանօթը երեք անգամ ատրճանակ կը պարպէ և քսուտին վրայ, գնդակներէն մին գէպի փորին, միւսը երանքին եւ երրորդը ողնայարին:

Վերաւորը ծանր վիճակի մէջ կը գտնուի. վերքերը մահացու կը կարծուին: «Մօնիթէօն» թերթը այս լուրը տալով կը յաւելու թէ Մաքսուտ «Մանգումէսի» երբեմնի թղթակիցը եղած է:

Հայկական շրջանակներու մէջ կը կարծուի որ Մաքսուտ անցեալները ձերբակալուած Ամիրխանեանցի հայր մատնողներէն մին է և իր ըրած մատնութեան համար սպաննուած է:

Եթէ ճիշդ է այդ լուրը, կը շնորհաւորենք Իլմիրի հայերը, որ մատնիչները պատժելու կերպը գիտեն:

Մատնիչները մաքրելու ամենէն լաւ միջոցը գնդակը և գաշոյնը են:

— Վերջին պահուն Իլմիրէն տեղեկութիւն ստացանք որ Իլմիրի Մաքսուտ մատնիչը սպաննողը Դաշնակցական օհարակիչ մը եղած է: Ահաբեկիչը ձերբակալուած չէ. հայերու մէջ մեծ ոգեւորութիւն կը տիրէ: Այդ մասին թղթակցութիւն կայ, զոր միւս անգամին կը հրատարակենք:

— Այսօր ընդունեցինք այն

